

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄԷՃ.
» Գաւառացի » 10 ՄԷՃ.
Վեցամսեայ Կ. Պոլսոյ » 4 ՄԷՃ.
» Գաւառացի » 5 ՄԷՃ.
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրյ.
Յանուարի տոյրը մէկ անգամի հա-
ժար 3 դուրուշ, երկու անգամի հա-
ժար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար դատ սակարկութիւն կըլլայ:



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 25 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Բեգլարլուր 2 յունիս.
Պրիւսիոյ մէջ գումարութիւնը գնալաւ
նախօրոյդ (որուն Բ. Գուռն ալ պիտի մաս-
նակցի), պարզապէս մարդասիրական նը-
պատակաւ հրաւիրուած է և ոչ երբեք
աշխարհալարական:

Փարիզ 5 յունիս.
Պ. Կամպիթթա՝ Սթէր քաղաքին մէջ
ատենախօսութիւն մ'ընելով՝ խոսիւ պար-
տաւեց Պանարաթիւսները:

Սթրազպուր 2 յունիս.
Փարիզի թերթը դար անուն լրագրին
արդիւնեցաւ բոլոր Ալգաս—Լորէնի մէջ:
Պայօննէ 5 յունիս.

Քարլսստէն 2 յունիս.
Քարլստէն 2 յունիս.
Պէլլրատ 5 յունիս.

Միլան իշխանին իւր վերադարձը չը-
նորհաւորելու առթիւ իրեն ներկայացեալ
պատգամաւորութեան մը հասկցուց թէ
Բուսնիոյ և Սերվիոյ մէջ կազմուած դաշ-
նակցութիւնը, որ իր Պուրէշ երթալով
կընտեցաւ, իւր ուղեւորութեան ամենէն
կարեւոր արդիւնքն է:

Փարիզ 4 յունիս.
Հոնէնցոյն իշխանին Սլաւոյ դա-
հուն ընտրելի տառապանքներուն զրոյցը
պաշտօնական կերպիւ սուտ կը հանուի:

Սանթամար 4 յունիս.
Քարլստէն 4 յունիս.
Քարլստէն 4 յունիս.
Քարլստէն 4 յունիս.

Հոնէնցոյն 4 յունիս.
Պապը նորէն հիւանդացաւ:
Վիէննա 5 յունիս.

Լոյտի ընկերութիւնը 100 քըրըմից
կը խօստանայ Պ. Նիքոլիշն սպաննող մատ-
նողին:

Լոնտոն 5 յունիս.
Կարլաթայէն եկած հեռագիրը կըծա-
նուցանեն թէ Բրիտանիոյ հոնէնցոյն
թեմէն քննարկուեց:

Վիէննա 4 յունիս.
Նուվէլ Բրէս Լիւր լրագրիւր Հիւստա-
այն խօսքերուն՝ զոր Պէլլրատէն քաղաք-
մէջ երթալով հեռագիրն ըսել կուտայ Սեր-
վիոյ իշխանին:

Փարիզ 4 յունիս.
Ազգային ժողովը մէջ Պ. Գալիէլան
և Պ. Լըպրիւ—Ռոյն ընտրական օրինաց
դէմ կը խօսին: Պ. Լըպրիւ—Ռոյն պաշ-
պանողական հանրապետութեան ջատա-
գութիւնը կը խօսէ:

Օքսֆորտի երկրորդական արուեստա-
հանդէսին մէջ Պ. Կամպիթթա՝ խօսեալ
խօսութիւն մ'ընելով՝ ըսաւ ի մէջ այլոց
թէ հանրապետութիւնը միակ սպաւէնն
է բարեկարգութեան և իրաւանց, և յոր-
դորեց մօտենալ Պ. Օտթիլի Բարիէի և
ուրիշ իշխանապետոյ՝ որը հանրապետու-
թեան անձնուէր են, այս պայմանով հա-
րապետականը կրնան մեծամասնութիւն
ունենալ, ըսաւ:

Կլաքքով 4 յունիս.
Փուլերը բացուեցան, ամիսահանուց

Դործաւորները վերջապէս զինուորով նո-
րէն աշխատութեան սկսան:

Հոնէնցոյն 4 յունիս.
Պապը սաստիկ տենդէ բռնուեցաւ:
Բոլիւնի երկրի մէջ կերակին:

Մատրիւ 4 յունիս.
Թագաժառանգ Տոն Ալթոն իշխանին
էպր դեռնէն ասդին անցաւ:

Լոնտոն 5 յունիս.
Օտթիլի 47 11/16
Քարլստէն 4865 —
» 1869 53 1/4
» 1871 63
» 1872 83 1/4
Անգլիա 92 3/4

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Ատորեաց Տրիպոլի կառավարիչ
Հադի-բեյ փաշան Ենի-Սանա քա-
ղաքին կառավարիչ անուանեցաւ:

Գրը—Շէհրի կառավարիչ Հայտար
պէյ Գարա—Հիսար—Շարքի կառա-
վարիչ անուանեցաւ:

Վիէն. Սուլթանի Ս. Օսմանիէի պատ-
ուանչանը տուաւ Ելլամիոյ նախա-
րար Վիսմ. Եւսուֆ պէյին:

Եւսուֆի գործոց նախարարին
Գարաւան փաշայութեան տիրոջ տըր-
ւած ըլլալուն լուրը սուտ կը հանուի:
Տպագրական տեսչութեան կողմէ:

Նախորդ Մեծ—Եպարքոս Շիրվա-
նիդատէ Բարձր. Մէհմէտ Բիւշտի փա-
շան, որ անցեալ շաբթու Հայէպի կու-
սակալ անուանեցաւ, չորեքշաբթի ի-
րիկուն Գաղլիական շոգենաւով մայ-
րաքաղաքէն մեկնեցաւ իւր նոր պաշ-
տօնատեղին երթալու համար:

Ստիկանութիւնն Աւստրո—Հուն-
գարական դեսպանատան հետ խոր-
հրդակցութեամբ խառն յանձնա-
ժողով մը կազմեց, որոյ պաշտօնն է
մայրաքաղաքի գաւառացիները, գա-
րաւորացիներն ու արդանիւրացիները
հրաւիրել որ սահմանեալ պայմանա-
ժամու մը մէջ իւր առջև ներկայա-
նան և իրենց արհեստին ու անցելոյն
վրայ խնդրուած տեղեկութիւնները
տան:

Որոնք որ այս հրաւերին չարտա-
նան կամ գոհացուցիչ տեղեկու-
թիւն չկրնան տալ, Օսմանեան երկ-
րէն պիտի վաճառուին:

Ստիկան զատ գէնք կրելը բոլոր-
վին արգելադրուեց իրենց:

Ս. յս կերպով յանձնաժողովը Պ.
Նիքոլիշն սպաննող սըրաքսըրը դը-
նել կը յուսայ:

Աւստրիական Լոյտի ընկերութեան
Սթիէնք շոգենաւը չորեքշաբթի ա-
ռաւօտ Բոսֆորի նեղուցէն վար իջած

ժամանակ Սալը Պազարի առջև ա-
ւարտական ժէն անուն Պրիւսիոյ դար-
նուելով վերջինը ծանրապէս վնաս-
ւեցաւ:

Ուրբաթ առաւօտ Բէրա Ենի—
Շէհրի ըստած թաղը հրդեհ պատա-
հելով ինն փայտաշէն տուններ այրե-
ցան:

Կը ըսենք թէ Շիրքէթի խալիքի
ընկերութեան գանձապահ խալիք Ե-
ֆէնիտին, որ 25 տարեկան հանձա-
րեղ և ուսեալ երիտասարդ մէր,
երէկ Պոյաճի գեղ իւր նստած տանը
ընտրուեց ներսերէն ինքզինք և խեղ-
դուեր է:

Կըսուի թէ առաւօտուն Շիր-
քէթի խալիքի ընկերութեան հրա-
ժարեալ տնօրէն Հիւսէյին Եֆէնիտի-
ին տեսակցութեան գնացեր և վե-
րադարձին այս անձնասպանութիւնն
ըրեր է:

Մ. Մօրէն անուն 55 տարեկան
Գաղլիացի մը շքաւորութեան մէջ
ինկած ըլլալով, չորեքշաբթիէն հինգ-
շաբթի լոնտոնացի գիշերին ինքզինք
կախեց Ղալաթիա իւր բնակած սե-
նեկին մէջ, և հետեւեալ օրը յայտ-
նուելով, դիակը Գաղլիական հիւան-
դանոցը փոխադրեցաւ:

Փոքր Ասիոյ գաւառացի ոմանց մէջ
ալիւսած սովը խիստ փոքր բան է՝ հա-
մանաւորութեամբ Պէնկալայի սովին:
Բայց և այնպէս փոքր Ասիոյ մէջ՝
տեղական իշխանութեանց աննախա-
տեսութենէն հազարաւոր հոգիներ
սովածած են, մինչդեռ Պէնկա-
լայի մէջ անդրկալական կառավարու-
թիւնն իմաստուն նախատեսութեամբ
ամեն պէտք եղած միջոցները ձեռք
առնելով միլիոնաւոր հոգիներ մահ-
ւան անհրաժեշտ փոխարինեցաւ:

Անգլիոյ կառավարութեան կա-
տարած գործին մեծութիւնը կրնայ
հասկցուիլ հետեւեալ տեղեկութիւն-
ներէն՝ զորս Անգլիոյ լրագրիւրները
կը բերեն մեզ:

Պէնկալայի բնակչաց թիւն է 11
1/2 միլիոն: Հնդկաստանի անգլիա-
կան կառավարութիւնն հաշիւ ըրեր
է որ 1 միլիոն 791 հազար հոգի օգ-
նութեան գլխի կարօտէին: Ուստի
այս ահաբեկ բազմութեան հարկ ե-
ղած պարէնը մատակարարելու համար
232,170 տակաւաւալի յորեն և բրինձ
պէտք էր, շորս Հնդկաստանի Հիւ-
սիսային և Արեւմտեան երկրներէն
պիտի գոհնէր:

Իսկ այսպիսի պարէնը փոխադրե-
լու համար պատրաստել է հինգ շոգե-
նաւ, 1200 տեղական նաւեր, 75,000
սայլ, 75,000 սայլորդ, 150,000 սայ-
լածիք եղն, 9000 գրաստ, և 2000
ուղա:

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց հանրու
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
—Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պո-
լսո, Չիլիի խան, Մատիսի գրասեն-
եակը:
Համար ծախքը չվճարուած նոս-
ժակ չընդունուիր:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ԷՍԶԱՄԵ ՈՒՍՈՒՄԻԷ

24 մայիս	ուրբաթ իրիկուն	53.40
25 »	շաբթի առաւօտ	54 4
	բացուեցաւ	53 26
	կէս օր	

Կ. Պոլսոյ 24 մայիս,
Սօսիթիէ Ժէնէրալի բաժնիք Անգլիոյ 7
« Ժոնանակութեան » 4 28
Կ. Պոլսոյ Պանքային » 4.28
Քրէտի Ժէնէրալ » 9.25
Քրէտի Սթրոմ—Թիւրք
Երկաթուղեացի հիւն

	Տր.	113 1/2
	նոր	88
Փոխ.	1863	» 340
»	1865	» 341
»	1869	» 278
»	1872	» 84
Փոխ.	1873	»

Թրամուէյ
Օտթիլի 5.75

ԲՆԹԱՅՐ ԳՐԱՄՈՑ
24 ՄԱՅԻՍ

Անգլ. փոստ	գուրուշ	140.35
Կոստանտնուպոլիս	»	87 37
Եւսուֆ Բոսնա	»	90 10
Գորովից	»	51, 20
Հինգ փոստ	»	»
Հինգուց	»	105 40
Պոլսոյ	»	124 20

Ս. Զ. Բ. Ե. Ե.

Ա. Զ. Բ. Ե. Ե.

Ինչպէս որ ծանուցել էինք, Ս.
Պատրիարքն այսօր ժամ 3ին կայ-
սերական պալատը գնաց չորս ե-
պիսկոպոսաց, վեց վարդապետաց
վեց քահանայից, Գաղ. ժողովոյ եր-
կու անդամաց և այլ ազգային պաշ-
տօնէից ուղեկցութեամբ:

Լրագրոյ մամուլը գրուած ժա-
մանակ կըլինէր թէ Կայսերական պա-
լատէն շրջի հանգիստ Բ. Գուռը
կուղայ:

Ահաւասիկ մայիս 8ի Ընդհ. Ժո-
ղովոյն մէջ Ս. Պատրիարքին կարգա-
յած ատենադահլութեան պատճէնը:

Տեարք Երեւոյի տանք Հայոց Ազգին.

Այսօր կուգամ իմ խորին չնորհալիութիւնս յայտնել Ձեզ՝ որ ներկայացուցին էք Տաճկաստան աշխարհիս Հայ ազգին, այն անարգամեծար բնաւութեան համար՝ որով զնուստս բարձրացուցիք ի Պատրիարքութիւն Հայոց ։

Ես նկատելով իմ անարժանութիւնն, անբաւականութիւնն, իմ անձին տկարութիւնը, կանխաւ դրով աղաչեմ էի Ձեզ որ զիս ընտրեիւց յանկէն հասնէք . և տնդեալ օր երբ լսեցի զիս ընտրելիք՝ հաստատապէս որոշեցի որ ինչեւմէ և պատկառելի ժողովոյդ շնորհապարտութիւնս յայտնելէս յետոյ՝ աղաչեմ որ հրաժարականս ընդունելու չնորհ ընէք . սակայն երեսփոխան տեարք չլինի և յայտարարեցին թէ այսպիսի ընդհանուր համալրութեան առջև հրաժարելն՝ ազգն ստնակոխ ընել է : Կը զարհուրեմ այս յայտարարութեանէն, և իմ ներքին համոզմամբս կը պընդեմ թէ բարձր պաշտօն չընդունելով՝ խնամհազոյն պաշտամանս յանձնառութիւն յայտնելն ազգին գէտ թշնամանք ընել չէ : Բայց ի վարդապետութեան ամեն պաշտօնի և ստաւիճաններու ցարդ ազգայնոց ըստիպմամբն արժանացած եմ . ես բնաւ պաշտօնի բարձի հետամուտ չեմ եղած . եթէ կատարեալապէս առողջ տեսներս ինձ յանձնուած դործերն ազգը գոհացնելու աստիճան գլուխ հանել չեմ կարողացած , ո՛րչափ ևս առաւել այժմ այս տկարութեան երկիւղին մէջ . ոչ առ համեստութեան՝ այլ վստն ճշմարտութեան ահա հրապարակաւ կը յայտնեմ որ իմ անձիս վրայ բնաւ համարում չունիմ ։ Չըլլայ որ այս խօսքերս յուսահատութեան յայտարար համարուին . յուսահատութիւնը թէ՛ հոգեւորապէս և թէ՛ քաղաքականապէս գիտեմ որ անկերելի է , քանզի բազումք են արժանաւորագոյնք , թերեւս փափաքողներ ու գանուխն , ընտրեցէք անոնց մին , և ես յօժարակամ կը ծառայեմ ազգին ընդ նորա իշխանութեամբ , զի փափաքն ի գործ կը մղէ :

Արդ , ներեցէք ինձ , Տեարք , որ այս անկեղծ յայտարարութեանց հետ քանի մը խօսք ալ ընեմ այս Պատկառելի ժողովոյն մէջ մի միայն յազգաւորութեան թեմաքեալ : Դուք զով որ ալ ընտրէք Պատրիարք , ես կը վստահեմ որ վերջին տարիներու դաժակալըներուն վիճակը կունենայ : Պատրիարք ընտրուելէն քանի մ'ափս յետոյ՝ նախ ժողովուրդին աչքն և ապա աթոռէն կիցնայ Պատրիարքներու այս յաճախ անկմանց պատճառ մի միայն իրենց պատկառութիւնները չեն . չեմ ուրանար որ անոնք ալ սխալներ կը գործեն , բայց ես և մեզնէ շատերը թերեւս փնտռելով ուրիշ պատճառներ կը գտնեմք :

Շատեր կըսեն թէ Պատրիարքներու անկման պատճառն ազգային Սահմանադրութիւնն է . ասոր չեմ համոզուած . ասկէ 14 տարի առաջ հին պատրիարքներուն ունեցած մեծ իշխանութեան չափ սահման գնելու՝ և մեր Օսմանեան կառավարութեան վաւերացեալ կամ շնորհեալ առանձնաշնորհութեանց կանոնաւորապէս վայելմանց համար՝ ազգը գեղեցիկ խորհրդով Սահմանադրութիւն մը խմբագրեց . բոլոր Հայերը խայտաղկն ցնծութեամբ և օտարք գովեցին ըզմեզ :

Կը գովեմ ազգին աշխատութիւնը՝ որոյ վստակակից իսկ գտնուած եմ , և կը հիանամ այս կանոնաւորութեան մէջ մտնել փափաքելուն

վրայ , զոր մինչև անգամ շատ համարեցան մեզ այն առնել , և ըսին թէ՛ Հայոց ազգին Սահմանադրութիւն տայլ՝ ազգայն ձեռք ծանրագին՝ այլ դիւրաբեկ գործի մը տարու կը նմանի . սակայն Ազգը միաձայն հաւանութեամբ ընկալաւ զայն : Կը յիշեմ որ եկեղեցական պատգամաւորութիւնն՝ որով թարգմանն էի՝ օր մը 12 տարի յառաջ՝ ըսաւ թէ ազգը առանց Սահմանադրութեան չէ կարող կառավարուիլ : Պատրիարքներ ալ եկան և ըսին թէ իրենց կողմնացոյցն է Սահմանադրութիւնը , և իրաւունք ալ ունէին . ուստի չենք կրնար հիմա ըսել թէ պատրիարքներուն անկման պատճառն ազգային Սահմանադրութիւնն է . այսպէս ըսելով հակասութեան մէջ կիցնամք :

Ինչ է ուրեմն պատճառ պատրիարքներու անկման : Ինձ կը թուի թէ առաջին պատճառ՝ ամեն ազգային անհատի իւր իրաւունքներն ու պարտիքը չճանչնել և չգործադրելն է : Այսօր ընտրութիւն կըլլայ , թաղ մը 500 ընտրող ունի , 50 կամ աւելի պահաւ քուէ կը դրկէ , և չորս հարիւր յիսունն անտարբեր ու անմասն կը մնան , բայց ընտրեալը ըստ օրինի կը վաւերանան : Ի վերջէ կեննեն գոհութիւն կը յայտնեն ընտրելոյ գէտ , ընտրեալը ինքզինքնին կը պաշտպանեն կամ կը մարտնչեն : Ինչպէս ընտրութեան անկման պատճառն է ուրիշ նուիրակաւ իրաւանց և պարտեաց մէջ անհոգութիւն և անտարբերութիւն և իրարու գէտարհամարհանք ցոյց տալով , նոյն հետեւն կը ծագին կադ , կուր , անհամաձայնութիւն , երկպառակութիւն , և ապա ի վերջ բանի Սահմանադրութեան վրայ կը ձգուի յանգստիք : Այսպէս պզտիկէն մեծնալով՝ խռովութիւնները կը զայրանան , և Պատրիարք և ժողովը կիցնան : Ուստի ազգին խռովութեան և պատրիարքներու անկման պատճառ ազգային Սահմանադրութիւնը չէ , այլ ազգայնոց նոյն Սահմանադրութեան համաձայն իրենց իրաւունքն ու պարտիքը չկատարելն է : Մեքնք ուղեցին Սահմանադրութիւնը , և միշտ ըստ այնմ վարուելու աշխատելու եմք . եթէ ներկայ Սահմանադրութեան մէջ անգործադրելի կէտեր գտնուին , մեք՝ Սահմանադրութեան հետ՝ վերաքննելու արտօնութիւնն ալ ունիմք շնորհիւ Օսմանեան Տէրութեան . ուստի Սահմանադրութիւնն ալ վերաքննութիւնն ալ մերն է . ասոնց գէտ՝ անգործադրելի մեքնք մեք գէտ՝ մերնք ըսել է , և փոխանակ մեր գոհութիւններն յառաջ տանելու , աշխատելու Սահմանադրութիւնը մեր ժողովուրդին կեանքին մէջ մտցնելու և խոհմութեամբ վարուելու Սահմանադրութիւնը չհասկընալով չտիրողներու գէտ , որպէս զի ինքզինքն : Ծայրայեղութիւններէ պէտք է զգուշանալ :

Երկրորդ և գլխաւոր պատճառն այն է , որ Հայոց ազգը կը հաւատայ թէ ներկայ Պատրիարքութիւնն ալ հնոյն յար և նմանն է . 16 տարւան փորձով գիտեմք որ հին պատրիարքութիւնը չէ մնացած , ազգը կակնկալէ , Պատրիարքը չկրնար գոհ ընել ազգին փափաքը : Այսօր իւր միջնորդութիւնն ու երաշխաւորութիւնն իսկ յերկայս կը տառաջնէ : Հայոց ազգը՝ Պատրիարքի իշխանութիւնը սահմանադրած ատեն՝ նոյն իշխանութեան գոյութեան վրայ կարծես չէ մտածէր . զօրաւորին չափ , կանոն , սահման , կապ դրինք զի զօրաւոր էր . իսկ երբ անոյր է , երբ միմիայն անունը մնացած է գրեթէ առանց ազդեցութեան , և ասոր ապացոյց՝ մէկ աղաղակաւ կիցնայ Պատ-

րիարք մը , ինչ ընէ Պատրիարքը . թող Սահմանադրապէս ընթանայ , բայց քանի որ Պատրիարքութիւն չէ մնացած՝ ինչ ընէ , ցըցուցէք Պատրիարքութիւնը և թող գործէ :

Այս տխուր վիճակին պատճառները բացի սոցանէ ուրիշ շատեր ալ կրնան լինիլ : Բայց ինչ որ ալ ըլլան , թէ՛ Օսմանեան կայսրութեան և թէ՛ Ազգին օգուտն ու շահը կը պահանջեն որ պատրիարքութիւնը գոյանայ , կենդանանայ որոշաճապէս : Երբ կը տեսնեմք որ Պատմութիւնը Կի Պօլսոյ Հայ Պատրիարքայ թէ՛ Օսմանեան տէրութեան և թէ՛ Հայոց ազգին մատուցած անհամար ծառայութիւններն անմահացուցած է , դատարարութեամբ իւրաքանչիւրս մեր պարտիքը կատարելու՝ այն փոքր համոզմամբ թէ Օսմանեան Տէրութեան և անոր գարաւոր հպատակ Հայոց ազգին ճշմարիտ օգուտին համար պիտի աշխատինք : Ուրեմն ի բաց քեցենք մեր արտերէն այն ամեն բաներն՝ որ խոչընդոտն են գործելու , անմիաբանութիւն , ատելութիւն , անտարբերութիւն , վհատութիւն , անըպատակ կուսակցութիւն , քամահանք , խժբժանք , և այլն : Զօրանանք գործելու համար՝ առանց իրարու գլխու վրայ ճամնկեան սուր կախելու . զօրութիւնը միութեան մէջ ընէ , և միութիւնը պահպանող Քրիստոնէական սէրն է , որ մեր հաւատքին գործնականն է . և ով որ կը հաւատայ հոգեով՝ կը սիրէ , այսինքն կը գործէ սրտով և ով որ կը գործէ՝ նա միայն իրաւունք ունի յուսալու . միանանք սիրոյ գրօշին ներքէ : Առանց կուսակցութեան ազգչկայ , բայց լուսաւորեալ ազգաց մէջ ազգին բուն օգուտն իրենց նըպատակ բռնած են . վայրագար վէճերէ հեռի մնալու ենք , կիրքերն ի բաց թողնելու ենք , բոլոր ետեւութիւնները միակ էսին այսինքն Ազգին վրայ միանալու են . սիրոյ շրջանակին մէջ ամեն մարդ մեծ և միանգամայն պըզտիկ է . վիճաբանութիւնը լուսով կը յաղկն , կիրքերը բոցով . կրքերը բաժանման խրամատներ կը բանան , և որչափ սաստկանան՝ այնչափ խորին կը պղծեն զանոնք , և միութիւնը անհար կը գործեն : Իրարու գէտ թափած ճիգերնիս ազգին համար թափենք . մոռնանք անցեալն և նոր ոգեով կազդուրինք :

Դատարարակենք մեր մանկունքն և ջանանք որ մեր ազգային հին համբաւն անաղարտ մնայ . բարձրացնենք ազգային բարոյականութիւնը , որով միայն կարող կըլլանք Տէրութեան և օտարաց համարումը դրաւել : Բոլոր են երբեմն թէ Հայը վաճառական է , բայց ոչ խղճմտանքի . հայերը հինգ հարիւր տարի յառաջ Եւրոպա բնակող ազգի մը վաճառականութիւն , հաշուեկալութիւն եւ երկրադործութիւն սովորեցուցած են . կը թենք մեր զաւակները Աստուածապաշտութեան և ուսմանց մէջ . թող խրատուի այն հայը որ ցովէ , արեւոյդ է , ծոյլ է , ընտանեւէր և որդեւէր չէ , և զըրկուր ամեն իրաւունքներէ այն մարդը՝ որ հայ է ու ազգը չտիրեր , զաւակներ ունի և զանոնք գպրոց չը դրկեր , գպրոց ունի և հոգ չտանիր անոր , եկեղեցի ունի և անհաւատաբարմէ անոր : Ազգին բարիք ընտելեալուն երախտապարտ գտնութեք , որպէս զի բարեբանութեան ունենալը միշտ միանանք , եղբայրք , ալ ու ձախը թողունք և մեր միութեան բուն կեդրոնին՝ սրտին՝ դիմենք , այսինքն Հաւատանեաց ամենատուր Եկեղեցւոյ , մեր մարդը ծնողին ծոցը համախմբուինք , մեր Եկեղեցւոյ բարգաւաճմանց կամ մեր յուսոյ խաղա-

խին ամբութեան համար ամեն ջանք ի գործ գնենք . մեր հոգեւոր եւ մարմնաւոր երջանկութեան կարապետը մեր Եկեղեցին է . մեր հարցառաքինութեանց և բարեպաշտութեան մէջ իւրաքանչիւր հայ աշխատինք յառաջ երթալ . մեր եկեղեցականութիւնը բարձրացնենք և ազնուացնենք , զի անոնք մերն են եւ ոչ ուրիշին , զանոնք և բոլոր ազգին պաշտօնեայններն անուանարկելէ՝ անպատուելի՝ զգոյշ կենանք . համեստութիւնը մեր կենաց կանոնն լինի , և մեր ամեն բանին՝ մինչև իսկ տըպագրական աղատութեան մէջ՝ համեստութիւն փայլի : Ինչ կուսակցութեանց որ ծառայենք , եկեղեցւոյ կէտին վրայ միանանք , նման իրարմէ հեռացող ճիւղերու , որոց բունը մէկ ծառի վրայ է , ամենքս ալ եկեղեցւոյ կողմ , միութեան կողմը ըլլանք . ուստի եկեղեցին միութեան մէջ պահենք , բոլոր աթոռներն իրերապատշաճ ներդաշնակութեան մէջ գնենք . մեր աղաղակն ի խորոց սրտէ այս թող ըլլայ . յաւերժացի միութիւն եկեղեցւոյն Հայաստանեայց , և նովաւ միաբանութիւն ազգին :

Ջանանք ազգը ներկայացնող այս Բնագահուր ժողովը պատկառելի պահել . յարգենք մեր օգտին համար ընտրած մարդիկներն , զի անոնց պատիւը մերն է . եթէ մեք մեր կաթողիկոսին , մեր Պատրիարքին , մեր առաջնորդներուն , մեր ժողովներուն պատիւը չպահենք , օտարներէն ըզնոյն պահանջելու իրաւունքնիս կը կորսնցունեմք . ներքնապէս միութեամբ զօրանանք , արտաքուստ պատկառելի և հզօր կըլլամք :

Այս միութեամբ կարող եմք ըզմեզ զեկալարել :

Թող աշխարհի ազգաց և ազանց ահագին նաւատորմին մէջ փոքրիկ նաւակ մը եղած լինի Հայոց ազգը . այսչափ դարերէ ի վեր այս նաւակը ո՛րչափ ալեաց յաղթեր և ցարդ չէ ընկղմեր Աստուծոյ շնորհիւ և մեր հարց խնամտուն զեկալարութեամբ :

Ընտրեցէք Ձեր զեկալարը , Ձեր Պատրիարքը , և ժողովները , սակայն վստահութիւն ունեցէք վրան . նաւակը փոթորիկ հանդիպած ատեն զեկալարը ձեր վստահութեամբը զօրանայ , ահագին նաւերու մէջէ պիտի անցնի տունաց անոնց զարնուելու . այն ատեն՝ երբ ահագին ալքը կսպառնան և չըրթ թայագերը հողմունք՝ ի հիւսիսոյ ի հարաւոյ , յարեւելից և յարեւմտից երերածովի կըտատանին , երբ նաւակին մէջինները ազմուկով չփոթով և անիշխանական ցոյցերով զեկալարը կը չլիւթեն , զեկն անոր ձեռքէն կիցնայ , և նաւակն ամեն դիւաց փրչած հովերուն կը մատնուի : Ձի թէ ներքին և թէ՛ արտաքին գոհաւորութեանց միանգամայն յաղթելու առանց վհատելու՝ գրեթէ անկարելի է , եւ շատերը ձեռնթափ կը լինին , և ամեն քիչ շատ մտածող մարդ կը գոչէ . այս իմ գործս չէ , այլ քու գործքդ է , ո՛վ ամենամեծ Աստուած , զի դու միայն գիտես ի չարեաց անակնկալ բարիս հանդ . Բու հզօր աշովդ . դու առաջնորդէ այս նաւակին , Հայոց ազգին , զոր Հայաստանի ստեղծելի ալեկոծութեանց մէջէն խաղըցելի , և Յակոբայ աստղին լուսովը խաւարին անդհոց և տխրութեան դիշերաց մէջ թէ և վերալից՝ անխորտակելի պահելով հասցուցելը մինչև ցարդ . վառ պահէ՛ այդ Աստուածային լոյսը Հայոց ազգին ամեն առաջնորդներուն , այս պատկառելի ժողովոյն , Եկեղեցւոյս Արարատեան Մայր աթոռոյ դահակալ ամենայն Հայոց Հայրապետին և բոլոր բարձ-

ROB BOYVEAU LAFFECTEUR ԲՕՊ ՂՈՍԱԿՕ
ԼԱՖԷՔԹԵՐ

Հաւանութիւն ստացած Գաղղիոյ, Պէճիոյ, Աւստրիոյ եւ Ռուսիոյ մէջ եւ Տօքթօր.
ժիւրօ ար Սէն—ժերմէի տաորարդութեամբ վաւերացած ։

Սրիւնը մաքրող զեղերուն մէջ այս շիրուաք միշտ առաջին տեղը բռնած է, թէ
իւր աղիզութեամբը որ 25 տարիէ 'ի վեր փորձով հաստատուած է, եւ թէ իւր մի-
մայն իւրաքանչիւր աղիզարութեամբը իշխնութիւն կրըմէ, առանց սնդկկի մօրթի հի-
ւանդութիւնները, որ քիւրի խոյր եւ ծննդարեւութիւնէ ու չափահասութիւնէ պատ-
ճառեալ հիւանդութիւնները, նմանապէս եւ մանաւանդ թէ նոր եւ թէ հին տորա-
փոխիկ հիւանդութիւնները որք քօրահիւսով սնդիկով, եւ իօտիւր ար բօթասիօով
էն բուժիր ։

Կրցանաւ Ժարիզ Բիշէր փողոց 42, եւ Կ. Պօլիս Ենէն Ճամի փողոց թիւ 16, 18
20, Տէլլա Սուսայի, Պ. Խաննի, Օհանթի. Վէլիյի, Զօպանօղլու, Քասսպեանէ
եւ Աւերքանի զեղարանները